ստիպեցին զՅոյնս բերել զՀրովարտակն, և նոքա սպասէին հրամանի Դատաւորին, ստիպեցին նաև զԴատաւորն գրով, եւ ահա գումարեցաւ Ժողով մեծ 'ի Դատարանի ('ի 20 Մայիսի), ուր էին ամենայն մեծամեծք քաղաքին, գնացին և Հայք բազմութեամբ՝ բաց 'ի Պատրիարքէն, եկին եւ Յոյնք. նախ ընթերցան զՀրովարտակն Յունաց, զոր թողեալ էին անպատոյճ իբր արհամարհեալ յաչս նոցա, և ապա զՀայոցն։ Յետ այնորիկ զՀրովարտակս Խոճաքեանին և Մուվէլլայ Վէքիլին յանուն երից գործակալաց, և 'ի վերջոյ զհրաման Կուսակալին Դամասկոսի՝ համաձայն մնաց հրովարտակաց, և պատուէր սաստիկ կատարել ըզհրամանն։ Դատաւորն ասէ՝ այսօր բաւականացուք ընթերցմամբ հրովարտակաց՝ և յայլում աւուր ձեռնարկեսցուք 'ի կատարումն հրամանին, զի մի աճապարելն՝ անկցուք 'ի դատապարտութիւն։ Խոճաքեանն եւ ոստիկան Կուսակալին ըստ հրամանին՝ ստիպմամբ պահանջէին 'ի Յունաց զՀրովարտակն տուեալ 'ի թուին ١٢٢٤, նոքա ասեն թէ առաքեցաք զայն 'ի Կոստանդինուպոլիս. Խոճաքեանն ըստ բանից նոցին խնդրեաց Իլամ 'ի Դատաւորէն, այլ նա ետ բերել զտուփն և կարեալ 'ի բաց եհան զայն անտի, եւ ջնջեցաւ արձանագրութիւն նորին, և ցրուեցաւ ժողովն։

Յետ երկուց աւուրց վերստին գումարեցաւ՝ լուծանել զխնդիր հետեւակ երից ազգաց, որպէս գրեալ էր 'ի հրովարտակին քննել զայն 'ի տեղւոջ իւրում։ Եւ իբրեւ կամէին կոչել զնոսա 'ի ժողով անդր և լսել բան 'ի բերանոյ նոցա, ընդդէմ եկաց Դատաւորն և հարցանէր ցբազմականս թէ՝ սոքա ո՞ր ազգի հետեւողք են, ամենեքեան լուեցին և ոչ ետուն պատասխանի։ Նուրի Էֆէնտին ասէ՝ ըստ որում սոքա ոչ գտան 'ի մեծի դատին 'ի Կոստանդինուպոլիս, Տէրութիւնն զքննութիւն սոցա սահմանեաց լինել յԵրուսաղէմ. զարմանք են թէ ո՞րպէս ոչ կամիք կոչել զնոսա 'ի ժողով որք 'ի քաղաքի աստ են. Դատաւորն երկարէր զխօսս իւր և տքնէր չկոչել զնոսա. և 'ի սատկանալ վիճմանց՝ մին 'ի գործակալաց եմոյծ ըզնոսա 'ի ներքս. և 'ի հարցանել Դատաւորին նախ ցՀապէշս պատ 'ի պատ բանիւք, ապշեալ մնաց այրն, զի ոչ կարէր 'ի միտ առնուլ զլսութիւն բանից նորին, և 'ի